



Ուղեցույց

Ի՞նչ է պետք գիտնալ Պետական եւ ՏԻՄ
մարմիններու հետ գործ ունենալու ատեն

Յունուար, 2020թ.

Սույն ուղեցույցը հովանավորուած է «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան դրամաշնորհի շրջանակէն ներս: Այստեղ արտայայտուած է հեղինակի դիրքորոշումը, եւ պարտադիր չէ, որ ան համընկնի «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան դիրքորոշումին հետ

1. Արդեօք սահմանափակուած են պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտօնատար անձերը իրենց գործողութիւններուն մէջ

Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտօնատար անձեր իրաւասու են կատարելու միայն այնպիսի գործողութիւններ, որոնց համար լիազօրուած են Սահմանադրութեամբ կամ օրէնքներով: Նշուած մարմիններուն եւ պաշտօնատար անձերուն կողմէ Սահմանադրութեամբ կամ օրէնքով չնախատեսուած գործողութիւն իրականցնելը կրնայ յանգեցնել պատասխանատուութեան, մինչեւ իսկ քրեական գործի:

2. Արդեօք մարդը սահմանափակուած է իր գործողութիւններուն մէջ

Ի հակադրութիւն պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն ու պաշտօնատար անձերուն՝ անհատ անձը ազատ է ընելու այն ամենը, ինչը չի խախտեր ուրիշներու իրաւունքները եւ չի հակասեր Սահմանադրութեան եւ օրէնքներուն: Ոչ ոք կրնայ կրել պարտականութիւններ, որոնք սահմանուած չեն օրէնքով:

3. Ի՞նչ սահմանափակումի ենթարկուած է հանրային իշխանութիւնը

Հանրային իշխանութիւնը սահմանափակուած է մարդու եւ քաղաքացիի հիմնական իրաւունքներով եւ ազատութիւններով՝ իբրեւ անմիջականօրէն գործող իրաւունք:

4. Ի՞նչ արձանագրութիւններով (ակտերով) կ'երաշխաւորուի արդիւնաւետ դատական պաշտպանութեան իրաւունքը եւ ի՞նչ կը նշանակէ ատիկա.

Իր իրաւունքներու եւ ազատութիւններու արդիւնաւետ դատական պաշտպանութեան իրաւունքը երաշխաւորուած է ինչպէս Սահմանադրութեամբ, այնպէս ալ հռչակուած է միջազգային շարք մը հանրաճանաչ փաստաթղթերով, որոնց շարքին՝ Մարդու իրաւունքներու եւրոպական համաձայնագիրը (կոնվենցիա):

Արդիւնաւետ դատական պաշտպանութեան անձի իրաւունքը կ'ենթադրէ մէկ կողմէ օրէնսդիրի պարտականութիւնը՝ լիարժեք դատական պաշտպանութեան հնարաւորութիւն, միւս կողմէ իրաւակիրառողի պարտականութիւնը՝ առանց բացառութիւններու քննարկման ընդունիլ անձերը՝ օրինական կարգով իրենց ուղղուած դիմումները, որոնցմով անոնք կը հայցեն իրաւական պաշտպանութիւն իրենց իրաւունքներու ենթադրեալ խախտումներէն: Ակնյայտ է, որ առաջին հերթին

այս պահանջը կը վերաբերի դատարաններուն, քանի որ այդ մարմիններն են, որ
օժտուած են իրաւական պաշտպանութեան համապարփակ լիազօրութիւններով

**5. Բացի ներպետական մարմիններէն, ո՞ր կրնայ դիմել անձը իր իրաւունքներու եւ
ազատութիւններու պաշտպանութեան հարցերով**

Իւրաքանչիւր ոք, ՀՀ միջազգային պայմանագիրներուն համապատասխան, ունի
իր իրաւունքները եւ ազատութիւնները պաշտպանելու հարցով մարդու
իրաւունքներու եւ ազատութիւններու պաշտպանութեան միջազգային մարմիններուն
դիմելու իրաւունք:

**6. Կրնա՞յ անձը ակնկալել հատուցում պետական եւ տեղական
ինքնակառավարման մարմիններու ու պաշտօնատար անձերու
գործողութիւններով պատճառուած վնասին համար**

Իւրաքանչիւր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման
մարմիններուն ու պաշտօնատար անձերուն ոչ իրաւաչափ գործողութիւններով կամ
անգործութեամբ, իսկ օրէնքով սահմանուած պարագաներուն՝ նաեւ իրաւաչափ
վարչարարութեամբ՝ պատճառուած վնասի հատուցման իրաւունք:

**7. Ոչ իրաւաչափօրէն դատապարտուած անձը կրնա՞յ ակնկալել հատուցում
ստանալու իրաւունք**

Եթէ յանցանք կատարած ըլլալու պատճառով օրինական ուժի մէջ մտած
դատավճիռով դատապարտուած անձը արդարացուած է այն հիմքով, որ նոր կամ նոր
երեւան եկած որեւէ հանգամանք կ'ապացուցէ անոր դատապարտման ոչ իրաւաչափ
ըլլալը, ապա այդ անձը ունի օրէնքին համապատասխան հատուցում ստանալու
իրաւունք, եթէ չ'ապացուցուի, որ այդ հանգամանքի ժամանակին բացայայտումը
լիովին կամ մասամբ կախեալ էր տուեալ անձէն:

**8. Ո՞ր պարագային կրնան օգտագործուիլ մարդու հիմնական իրաւունքներու
խախտումով ձեռք բերուած ապացոյցները**

Հիմնական իրաւունքներու խախտումով ձեռք բերուած կամ արդար
դատաքննութեան իրաւունքը խախտող ապացոյցի օգտագործումը կ'արգելուի:

**9. Ե՞րբ անձը պարտաւոր չէ ցուցմունք տալ իր, ամուսինին կամ մերձաւոր
ազգականներուն վերաբերեալ**

Ոչ ոք պարտաւոր է ցուցմունք տալ իր, ամուսինին կամ մերձաւոր ազգականներուն վերաբերեալ, եթէ ողջամտօրէն ենթադրելի է, որ ցուցմունքը յետագային կրնայ օգտագործուիլ իր կամ անոնց դէմ: Անձը ցուցմունք տալու պարտականութենէ կ'ազատի օրէնքով սահմանուած այլ պարագաներու եւս:

10. Որո՞նք չեն կրնար քրեական վարոյթի սահմաններուն մէջ կանչուիլ եւ հարցաքննուիլ իբրեւ վկայ

Իբրեւ վկայ չեն կրնար կանչուիլ եւ հարցաքննուիլ՝

1) անձեր որոնք ֆիզիքական կամ հոգեկան թերիներու հետեւանքով ունակ չեն ճիշդ ընկալելու եւ վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակայ հանգամանքները.

2) փաստաբանները՝ պարզելու համար տեղեկութիւններ, որոնք անոնց կրնան յայտնի ըլլալ իրաւաբանական օգնութեան դիմելու կամ նման օգնութիւն ցոյց տալու պարագային.

3) անձեր, որոնց տուեալ քրեական գործին վերաբերող տեղեկութիւնները յայտնի դարձած են քրեական գործով իբրեւ պաշտպան, տուժողի, քաղաքացիական հայցուորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչ մասնակցելու հանգամանքով.

4) դատաւորը, ինչպէս նաեւ՝ լիազօրութիւնները աւարտած դատաւորը, դատախազը, քննիչը, հետաքննութեան մարմնի աշխատակիցը եւ դատական նիստի քարտուղարը՝ կապուած այն քրեական գործին հետ, ուր անոնք իրականացուցած են իրենց դատավարական լիազօրութիւնները, բացառութեամբ տուեալ գործի վարոյթի ընթացքին թոյլ տրուած սխալներու եւ չարաշահումներու քննութեան, նոր ի յայտ եկած հանգամանքներով տուեալ գործի նորոգման կամ կորսնցուցած վարոյթի վերականգնման պարագաներուն.

5) ձեռնադրուած հոգեւորական-խոստովանահայրը՝ խոստովանանքէն իրեն յայտնի դարձած հանգամանքներու մասին.

6) մարդու իրաւունքներու պաշտպանը՝ իր պարտականութիւնները կատարելու կապակցութեամբ իրեն յայտնի դարձած հանգամանքներու մասին:

11. Անձը պարտաւոր է ապացուցել իր անմեղութիւնը յանցագործութեան կատարման առնչութեամբ

Յանցագործութեան համար մեղադրուողը կը համարուի անմեղ, քանի դեռ անոր մեղքը ապացուցուած չէ օրէնքով սահմանուած կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մէջ մտած դատավճիռով: Անձի մեղաւորութեան ապացուցման պարտականութիւնը դրուած է վարոյթը իրականացնող մարմնին վրայ, անոր զուգահետ անձը իրաւունք ունի իրականացնել իր պաշտպանութիւնը մեղադրանքէն:

12. Ե՞րբ հնարավոր է, որ անձը դատապարտուի նոյն արարքին համար

Ոչ որ կրնայ կրկին դատուիլ նոյն արարքին համար, սակայն այս արգելքը չի խոչընդոտեր գործի վերանայումը՝ օրենքին համապատասխան, եթե առկայ են նոր կամ նոր երեւան եկած հանգամանքներ, կամ գործի քննութեան ժամանակ տեղ գտած են հիմնարար թերութիւններ, որոնք կրնային ազդել գործի արդիւնքին վրայ:

13. Ի՞նչ նուագագոյն իրաւունքներ կ'երաշխաւորէ Սահմանադրութիւնը քրէական մեղադրանքէն պաշտպանուող անձին համար

Յանցագործութեան համար մեղադրուող իւրաքանչիւր ոք ունի՝

- 1) ներկայացուած մեղադրանքի բնոյթին եւ հիմքին մասին իրեն հասկանալի լեզուով անյապաղ ու հանգամանօրէն տեղեկացուելու իրաւունք.
- 2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանուելու իրաւունք.
- 3) իր պաշտպանութիւնը նախապատրաստելու եւ իր ընտրած փաստաբանին հետ հաղորդակցուելու համար բաւարար ժամանակ եւ հնարաւորութիւններ ունենալու իրաւունք.
- 4) իր դէմ ցուցմունք տուող անձերը հարցման ենթարկելու իրաւունք, կամ որ այդ անձերը ենթարկուին հարցման, ինչպէս նաեւ, որ իր օգտին ցուցմունք տուող անձերը կանչուին եւ հարցաքննուին նոյն պայմաններով, ինչ իր դէմ ցուցմունք տուած անձերը.
- 5) թարգմանչի անվճար ծառայութենէ օգտուելու իրաւունք, եթէ ան չի տիրապետեր հայերէնին.

14. Արդեօք անձը կրնա՞յ պահանջել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններէն իրեն առնչուող գործերով իրականացնել պատշաճ վարչարարութիւն

Սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ, որ իւրաքանչիւր ոք ունի վարչական մարմիններու կողմէ իրեն առնչուող գործերուն անաչառ, արդարացի եւ ողջամիտ ժամկետի մէջ կատարելի քննութեան իրաւունք:

15. Անձը իրաւունք ունի՞ վարչական վարոյթի ընթացքին ծանօթանալ իրեն վերաբերող փաստաթուղթերուն

Վարչական վարոյթի ընթացքին իւրաքանչիւր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթուղթերուն ծանօթանալու իրաւունք, բացառութեամբ օրենքով պահպանուող գաղտնիքներուն:

16. Կրնա՞յ արդեօք անձը ակնկալել վարչական վարոյթի ընթացքին լսուած ըլլալ

Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտօնատար անձերը պարտաւոր են մինչեւ անձի համար միջամտող անհատական արձանագրութիւնը ընդունիլը լսել զայն, բացառութեամբ օրէնքով սահմանուած դէպքերուն:

17. Ե՞րբ անձը կրնայ ակնկալել Մարդու իրաւունքներու պաշտպանի աջակցութիւնը

Անձը կրնայ դիմել Մարդու իրաւունքներու պաշտպանին եւ ակնկալել աջակցութիւն՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն, պաշտօնատար անձերուն, եւ հանրային ծառայութեան ոլորտին մէջ գործող կազմակերպութիւններուն կողմէ մարդու իրաւունքներու եւ ազատութիւններու խախտումներուն առնչութեամբ:

18. Ի՞նչ է հանրագիրը

Հանրագիր կը համարուի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն ու պաշտօնատար անձերուն հանրային նշանակութիւն ունեցող հարցերով ներկայացուող գրութիւնը, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն ու պաշտօնատար անձերու գործունէութեան թերութիւններուն մասին հաղորդումը, ինչպէս նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն ու պաշտօնատար անձերուն գործունէութեան բարելաման, տնտեսական, քաղաքական, սոցիալական եւ հասարակական կեանքի այլ ոլորտներու վերաբերող հարցերու կարգաւորման կամ գործող իրաւակարգաւորումներու կատարելագործման վերաբերեալ առաջարկութիւնը:

Սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ, որ իւրաքանչիւր ոք ունի անհատապէս կամ ուրիշներու հետ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն ու պաշտօնատար անձերուն հանրագիր ներկայացնելու եւ ողջամիտ ժամկէտի մէջ պատշաճ պատասխան ստանալու իրաւունք:

19. Կրնա՞յ արդեօք անձը դիմել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն ու պաշտօնատար անձերուն՝ անոնց գործունէութեան մասին տեղեկութիւններ ստանալու եւ փաստաթուղթերուն ծանօթանալու համար

Սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ, որ իւրաքանչիւր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն ու պաշտօնատար անձերուն

գործունեության մասին տեղեկություններ ստանալու եւ փաստաթուղթերուն ծանօթանալու իրաւունք

20. Ե՞րբ կը մերժուի տեղեկություններ ստանալու անձի պահանջը

Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, պիտճէներէն ֆինանսաւորուող կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ հանրային նշանակութեան կազմակերպութիւնները, բացառութեամբ օրէնքով սահմանուած պարագաներուն, կը մերժեն տեղեկութեան տրամադրումը, եթէ ատիկա՝

- 1) կը պարունակէ պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք.
- 2) կը խախտէ մարդու անձնական եւ ընտանեկան կեանքի գաղտնիութիւնը, ինչպէս նաեւ՝ նամակագրութեան, հեռախօսային խօսակցութիւններու, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումներու գաղտնիութիւնը.
- 3) կը պարունակէ հրապարակման ոչ ենթակայ նախնական քննութեան տուեալները.
- 4) կը բացայայտէ մասնագիտական գործունեութեամբ պայմանաւորուած մատչելիութեան սահմանափակում պահանջող տուեալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- 5) կը խախտէ հեղինակային իրաւունքը եւ (կամ) յարակից իրաւունքները:

21. Ե՞րբ կրնայ մերժուիլ տեղեկատուութեան տրամադրումը

Տեղեկութեան տրամադրումը չի կրնար մերժուիլ, եթէ ատիկա՝

- 1) կը վերաբերի քաղաքացիներու անվտանգութեան եւ առողջութեան սպառնացող արտակարգ դէպքերուն, ինչպէս նաեւ տարերային (ներառեալ՝ պաշտօնապէս կանխատեսուող) աղէտներուն եւ անոնց հետեւանքներուն.
- 2) կը ներկայացնէ Հայաստանի Հանրապետութեան տնտեսութեան ընդհանուր վիճակը, ինչպէս նաեւ բնութեան եւ շրջակայ միջավայրի պաշտպանութեան, առողջապահութեան, կրթութեան, գիւղատնտեսութեան, առեւտուրի, մշակոյթի բնագաւառներուն մէջ տիրող իրական վիճակը.
- 3) չտրամադրելը բացասական ազդեցութիւն կ'ունենայ Հայաստանի Հանրապետութեան ընկերային, տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագիրներուն իրականացման վրայ:

22. Առնուագն ի՞նչ տեղեկատուութիւն պարտաւոր են հրապարակել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, պիտճէներէն ֆինանսաւորուող կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ

հանրային նշանակութեան կազմակերպութիւնները եւ անոնց պաշտօնատար անձերը

Եթէ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեամբ եւ (կամ) օրէնքով այլ բան նախատեսուած չէ, ապա պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, պիւտճէներէն ֆինանսաւորուող կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ հանրային նշանակութեան կազմակերպութիւնները եւ անոնց պաշտօնատար անձերը տարին առնուազն մէկ անգամ պարտաւոր են հրապարակելու իրենց գործունէութեան առնչուող հետեւեալ տեղեկութիւնները եւ անոնց մէջ կատարուած փոփոխութիւնները.

1) հանրութեան համար իրականացուող (իրականացման ենթակայ) աշխատանքները եւ ծառայութիւնները.

2) պիւտճէն.

3) գրաւոր հարցումներու ձեւերը եւ զանոնք լրացնելու վերաբերեալ խորհրդատուական ցուցումները.

4) հիմնական պաշտօններու ցուցակները, ինչպէս նաեւ պաշտօնատար անձերու անունները, ազգանունները, կրթութիւնը, մասնագիտութիւնը, պաշտօնը, աշխատանքի վայրի հեռախօսային համարները, էլեկտրոնային փոստի հասցէները.

5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը.

6) շրջակայ միջավայրի վրայ ներգործութիւնը.

7) հասարակական միջոցառումներու ծրագիրները.

8) քաղաքացիներու ընդունելութեան կարգը, օրը, ժամը եւ վայրը.

9) աշխատանքներու եւ ծառայութիւններու բնագաւառին մէջ գնագոյացման կարգը, գիները (սակագինները).

10) տնօրինուող տեղեկութիւններու ցանկը եւ անոնց տնօրինման կարգը.

11) ստացուած հարցումներու վերաբերեալ վիճակագրական եւ ամփոփ տուեալները, ինչպէս նաեւ՝ մերժումի հիմքերը.

12) նշուած տեղեկութիւններու մշակման կամ ստացման աղբիւրները.

13) նշուած տեղեկութիւնները պարզաբանելու իրաւասութիւն ունեցող անձի տուեալները:

23. Ո՞ր կանոնակարգը ունի առաւել բարձր իրաւաբանական ուժ

Հայաստանի Հանրապետութեան մէջ ամենաբարձր իրաւաբանական ուժը Սահմանադրութիւնը ունի: Միւս բոլոր կանոնակարգերը՝ սահմանադրական օրէնքները, օրէնքները, ՀՀ կառավարութեան որոշումները եւ այլ ենթաօրէնսդրական արձանագրութիւնները (ակտերը) պետք է համապատասխանեն Սահմանադրութեան:

Միջազգային պայմանագիրները ՀՀ-ի կողմէ չեն կրնար վաւերացուիլ, եթէ անոնք կը հակասեն Սահմանադրութեան, սակայն վաւերացուելու պարագային միջազգային պայմանագիրները առաւել բարձր իրաւաբանական ուժ ունին քան

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենքներն ու ենթաօրենսդրական արձանագրությունները (ակտերը):

24. Կրնա՞յ արդեօք անձը դատապարտուիլ կամ ենթարկուիլ մահապատիժի Հայաստանի Հանրապետության մեջ

Ոչ: Սահմանադրութիւնը կ'արգելէ ուեւէ մեկը դատապարտել կամ ենթարկել մահապատիժի:

25. Ե՞րբ կրնայ սահմանափակուիլ անձի ֆիզիքական եւ հոգեկան անձեռնմխելիութեան իրաւունքը

Ֆիզիքական եւ հոգեկան անձեռնմխելիութեան իրաւունքը կրնայ սահմանափակուիլ միայն օրենքով՝ պետական անվտանգութեան, յանցագործութիւնները կանխելու կամ բացայայտելու, հասարակական կարգի, առողջութեան եւ բարոյականութեան կամ ուրիշներու հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները պաշտպանելու նպատակով:

26. Կրնա՞յ արդեօք խոշտանգումի, անմարդկային կամ նուաստացնող վերաբերմունքի կամ պատիժի ենթարկուիլը իրաւաչափ համարուիլ

Անձը խոշտանգումի, անմարդկային կամ նուաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելը ամէն պարագայի չի կրնար նկատուիլ իրաւաչափ՝ նոյնիսկ պետական եւ հասարակական անվտանգութեան ապահովման, յանցագործութիւններու կանխման կամ բացայայտման անհրաժեշտութեան պարագային:

Մարմնական պատիժները եւս կ'արգելուին:

27. Ե՞րբ անձը կրնայ իրաւաչափօրէն զրկուիլ անձնական ազատութենէն

Անձը կրնայ անձնական ազատութենէ զրկուիլ միայն հետեւեալ պարագաներուն եւ օրենքով սահմանուած կարգով՝

- 1) իրաւասու դատարանը դատապարտած է անձը յանցանք կատարելու համար.
- 2) դատարանի իրաւաչափ կարգադրութեան չենթարկուելուն համար.
- 3) օրենքով սահմանուած որոշակի պարտականութեան կատարումը ապահովելու նպատակով.
- 4) անձը իրաւասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ ամկայ է անոր կողմէ յանցանք կատարուած ըլլալու հիմնաւոր կասկած, կամ երբ ատիկա հիմնաւոր կերպով անհրաժեշտ է յանցանքի կատարումը կամ զայն կատարելէ ետք անձին փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողութեան յանձնելու կամ իրաւասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրութեան համար վտանգաւոր վարակիչ հիւանդութիւններու տարածումը, ինչպէս նաեւ հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձերէ բխող վտանգը կանխելու նպատակով.

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետութիւն կանխելու կամ անձը արտաքսելու կամ այլ պետութեան յանձնելու նպատակով:

28. Սահմանադրութեամբ ի՞նչ նուազագոյն իրաւունքներ սահմանուած է անձնական ազատութենէ զրկուած անձին համար

Անձնական ազատութենէ զրկուած իրաքանչիւր ոք իրաւունք ունի՝

Ա) իրեն հասկանալի լեզուով անյապաղ տեղեկացուած ըլլալու ազատութենէ զրկուելու պատճառներուն, իսկ քրեական մեղադրանք ներկայացուելու պարագային՝ նաեւ մեղադրանքի մասին,

Բ) ազատութենէ զրկուելու մասին անյապաղ տեղեկացնել իր ընտրած անձին (այս իրաւունքի իրականացումը կրնայ յետաձգուիլ միայն օրէնքով սահմանուած պարագաներու, կարգով եւ ժամկետով՝ յանցագործութիւնները կանխելու կամ բացայայտելու նպատակով):

Գ) անյապաղ ազատ արձակուելու, եթէ քրեական յանցանք կատարելու կասկածանքի հիմքով ազատութեան զրկուելու պահէն ողջամիտ ժամկետի մէջ, սակայն ոչ ուշ, քան եօթանասուներկու ժամուան ընթացքին դատարանը որոշում չի կայացներ անազատութեան մէջ զայն պահելը թոյլատրելու մասին,

Դ) վիճարկելու իրեն ազատութենէ զրկելու իրաւաչափութիւնը:

29. Կրնա՞յ արդեօք անձը զրկուիլ անձնական ազատութենէ՝ քաղաքացիաիրաւական պարտաւորութիւնները կատարելու համար ի վիճակի չըլլալու պատճառով

Սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ, որ ոչ ոք կրնայ անձնական ազատութենէ զրկուիլ միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրաւական պարտաւորութիւնները

30. Ե՞րբ կրնայ սահմանափակուիլ մասնաւոր եւ ընտանեկան կեանքի անձեռնմխելիութեան անձի իրաւունքը

Մասնաւոր եւ ընտանեկան կեանքի անձեռնմխելիութեան իրաւունքը կրնայ սահմանափակուիլ միայն օրէնքով՝ պետական անվտանգութեան, երկրի տնտեսական բարեկեցութեան, յանցագործութիւնները կանխելու կամ բացայայտելու, հասարակական կարգի, առողջութեան եւ բարոյականութեան կամ ուրիշներու հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները պաշտպանելու նպատակով:

31. Ե՞րբ կրնայ սահմանափակուիլ բնակարանի անձեռնմխելիության իրաւունքը

Բնակարանի անձեռնմխելիության իրաւունքը կրնայ սահմանափակուիլ միայն օրէնքով՝ պետական անվտանգութեան, երկրի տնտեսական բարեկեցութեան, յանցագործութիւնները կանխելու կամ բացայայտելու, հասարակական կարգի, առողջութեան եւ բարոյականութեան կամ ուրիշներու հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները պաշտպանելու նպատակով:

32. Ի՞նչ երաշխիք կու տայ Սահմանադրութիւնը բնակարանի խուզարկութեան առնչութեամբ

Սահմանադրութիւնը, հռչակելով իւրաքանչիւր անձի բնակարանի անձեռնմխելիութեան իրաւունքը եւ նախատեսելով այդ իրաւունքի սահմանափակման հնարաւոր հիմքերը, միաժամանակ իբրեւ երաշխիք սահմանած է, որ բնակարանը կրնայ խուզարկուիլ միայն դատարանի որոշումով, օրէնքով սահմանուած պարագաներու եւ կարգով միայն:

33. Ի՞նչ կը նշանակեն հաղորդակցութեան ազատութիւնը եւ գաղտնիութիւնը եւ ե՞րբ կրնան անոնք սահմանափակուիլ

Հաղորդակցութեան ազատութիւնը կը նշանակէ, որ իւրաքանչիւր ոք ունի նամակագրութեան, հեռախօսային խօսակցութիւններու եւ հաղորդակցութեան այլ ձեւեր օգտագործելու ազատութիւն եւ անոնց գաղտնիութեան իրաւունք:

Հաղորդակցութեան ազատութիւնը եւ գաղտնիութիւնը կրնան սահմանափակուիլ միայն օրէնքով՝ պետական անվտանգութեան, երկրի տնտեսական բարեկեցութեան, յանցագործութիւնները կանխելու կամ բացայայտելու, հասարակական կարգի, առողջութեան եւ բարոյականութեան կամ ուրիշներու հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները պաշտպանելու նպատակով:

34. Ի՞նչ երաշխիք կու տայ Սահմանադրութիւնը հաղորդակցութեան գաղտնիութեան սահմանափակման առնչութեամբ

Սահմանադրութիւնը կը նախատեսէ հաղորդակցութեան գաղտնիութեան սահմանափակում միայն դատարանի որոշումով, բացառութեամբ երբ աստիկա անհրաժեշտ է պետական անվտանգութեան պաշտպանութեան համար եւ պայմանաւորուած է հաղորդակցուողներու՝ օրէնքով սահմանուած առանձնայատուկ կարգավիճակով:

35. Արդեօք պաշտպանուած են մարդու անձնական տուեալները եւ ի՞նչ պահանջներ կան զանոնք օգտագործելու համար

Սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ, որ իւրաքանչիւր ոք ունի իրեն վերաբերող տուեալներու պաշտպանութեան իրաւունք, իսկ անձնական տուեալներու օգտագործումը պէտք է կատարուի բարեխղճօրէն, օրէնքով սահմանուած նպատակով, անձի համաձայնութեամբ կամ առանց այդ համաձայնութեան՝ օրէնքով սահմանուած այլ իրաւաչափ հիմքի առկայութեամբ:

36. Արդեօք անձը իրաւունք ունի՞ ծանօթանալու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն քով իր մասին հաւաքուած տուեալներուն

Իւրաքանչիւր անձ իրաւունք ունի ծանօթանալու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն քով իր մասին հաւաքուած տուեալներուն, աւելին՝ պահանջելու ոչ հաւաստի տուեալներու շտկում, ինչպէս նաեւ ապօրինի ձեռք բերուած կամ այլեւս իրաւական հիմքեր չունեցող տուեալներու վերացում:

Անձնական տուեալներուն ծանօթանալու իրաւունքը կրնայ սահմանափակուիլ միայն օրէնքով՝ պետական անվտանգութեան, երկրի տնտեսական բարեկեցութեան, յանցագործութիւնները կանխելու կամ բացայայտելու, հասարակական կարգի, առողջութեան եւ բարոյականութեան կամ ուրիշներու հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները պաշտպանելու նպատակով:

37. Որո՞նք ունին ամուսնանալու եւ ընտանիք կազմելու իրաւունք, եւ ինչպէ՞ս կը կնքուի ամուսնութիւնը

Ամուսնանալու եւ ընտանիք կազմելու իրաւունք ունին ամուսնական տարիքի հասած՝ տասնութ տարեկանը լրացած կիներ եւ տղամարդը իրարու հետ՝ փոխադարձ կամաւոր համաձայնութեամբ: Անձը կրնայ ամուսնանալ նաեւ 17 տարեկանին, եթէ առկայ է անոր ծնողներուն, որդեգրողներուն կամ հոգաբարձուին համաձայնութիւնը, ինչպէս նաեւ՝ 16 տարեկանին, եթէ առկայ է անոր ծնողներուն, որդեգրողներուն կամ հոգաբարձուին համաձայնութիւնը, եւ ամուսնացող միւս անձը առնուազն 18 տարեկան է:

Ամուսնութիւնը կը կնքուի քաղաքացիական կացութեան արձանագրութեան պետական գրանցում իրականացնող մարմիններուն քով՝ օրէնսդրութեամբ սահմանուած կարգով՝ ամուսնացող անձերու պարտադիր ներկայութեամբ:

38. Ե՞րբ կը ծագին ամուսնութեան հետ կապուած անձի իրաւունքներն ու պարտականութիւնները

Ամուսիններու իրաւունքներն ու պարտականութիւնները կը ծագին քաղաքացիական կացութեան արձանագրութեան մէջ պետական գրանցում իրականացնող մարմիններուն քով ամուսնութեան պետական գրանցման պահէն:

39. Ո՞ր պարագային կ'արգելուի գրանցել ամուսնութիւնը

Կ'արգելուի ամուսնութիւն կնքել՝

- ա) այն անձերուն միջեւ, որոնցմէ գոնէ մէկը կը գտնուի օրէնքով սահմանուած կարգով գրանցուած մէկ այլ ամուսնութեան մէջ.
- բ) մերձաւոր ազգականներուն (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականներուն՝ ծնողներուն ու զաւակներուն, պապին, տատին ու թոռներուն, ինչպէս նաեւ հարազատ եւ համահայր կամ համամայր եղբայրներուն ու քոյրերուն, մօրաքրոջ, հօրաքրոջ, հօրեղբօր եւ մօրեղբօր զաւակներուն) միջեւ.
- գ) որդեգրողներուն եւ որդեգրուածներուն միջեւ.
- դ) այն անձերուն միջեւ, որոնցմէ գոնէ մէկը դատարանը ճանչցած է անգործունակ:

40. Որո՞նք են ծնողներու իրաւունքները եւ պարտականութիւնները

Ծնողները իրաւունք ունին եւ պարտաւոր են հոգ տանիլ իրենց զաւակներու դաստիարակութեան, կրթութեան, առողջութեան, լիարժէք ու ներդաշնակ զարգացման մէջ: Ծնողները ունին հաւասար իրաւունքներ եւ կը կրեն հաւասար պարտականութիւններ իրենց զաւակներուն նկատմամբ:

41. Ինչպէ՞ս եւ ե՞րբ կրնան անձը զրկել ծնողական իրաւունքներէն

Ծնողները կամ անոնցմէ մէկը կրնան զրկուիլ ծնողական իրաւունքներէն միայն դատարանի որոշումով՝ զաւակին կենսական շահերը ապահովելու նպատակով, եթէ անոնք՝

- 1) մէկ տարի անընդմէջ չարամտօրէն կը խուսափին ծնողական պարտականութիւնները կատարելէ, ինչպէս նաեւ՝ սննդագին (ալիմենտ) վճարելէ.
- 2) չեն փոխեր իրենց վարքագիծը ծնողական իրաւունքներու սահմանափակման մասին դատարանի վճիռը օրինական ուժի մէջ մտնելէ ետք՝ վեց ամսուան մէջ.
- 3) առանց յարգելի պատճառի կը հրաժարին առնել իրենց զաւակը ծննդատունէն կամ բժշկական օգնութիւն եւ սպասարկում իրականացնող կազմակերպութիւններէն.
- 4) մէկ տարի առանց յարգելի պատճառի կը հրաժարին առնել իրենց զաւակը դաստիարակչական, բնակչութեան ընկերային պաշտպանութեան կամ նմանատիպ այլ հաստատութիւններէն.

5) կը չարաշահեն իրենց ծնողական իրաւունքները, ինչպէս նաեւ՝ իրենց վարքագիծով վնասակար ազդեցութիւն կը գործեն զաւկին վրայ.

6) կը տառապին երկարատեւ ակոհողամոլութեամբ, թմրամոլութեամբ կամ թունամոլութեամբ.

7) կը տառապին երկարատեւ հոգեկան հիւանդութիւններով, որոնց ցանկը կը սահմանէ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը.

8) դաժանաբար կը վարուին զաւակին հետ, մասնաւորապէս՝

ա. պարբերաբար այնպիսի ֆիզիքական բռնութիւն կը գործադրեն անոր նկատմամբ, որ չի պարունակեր Հայաստանի Հանրապետութեան քրեական օրէնսգիրքով նախատեսուած յանցակազմի յատկանիշներ,

բ. պարբերաբար հոգեբանական բռնութիւն կը գործադրեն անոր նկատմամբ, այն է՝ դիտաւորութեամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ինչպէս նաեւ՝ ֆիզիքական, սեռական բռնութիւն գործադրելու սպառնալիքը, արժանապատուութեան պարբերական նուաստացումը:

Ծնողը կը զրկուի ծնողական իրաւունքներէն նաեւ, եթէ դատապարտուած է իր զաւկին դէմ ուղղուած դիտաւորեալ յանցագործութեան պատճառով:

Վերը նշուած 1-ին, 3-րդ եւ 4-րդ պարագաները ծնողական իրաւունքներէն զրկելու հիմք չեն, եթէ ծնողը կը գտնուի բժշկական հաստատութեան, կարգապահական գումարտակի, ուղղիչ հիմնարկի, ձերբակալուածները կամ կալանաւորուածները պահելու վայրի մէջ, կը մասնակցի վարժական հաւաքներուն կամ կը գտնուի պարտադիր ժամկետային զինուորական ծառայութեան մէջ, մարտական գործողութիւններու ընթացքին զինուած ուժերու կազմին մէջ, գերութեան մէջ, մեկնած է օտարերկրեայ գործուղման, եթէ ծնողական իրաւունքներէն զրկելը չի բխիր երեխայի լաւագոյն շահերէն: Դատարանը, իբրեւ յարգելի պատճառ, կրնայ նկատի առնել նաեւ այլ իրավիճակներ:

42. Արդեօք չափահաս զաւակը պարտաւոր է հոգ տանիլ իր ծնողներուն

Սահմանադրութիւնը կը սահմանէ, որ չափահաս աշխատունակ զաւակները պարտաւոր են հոգ տանիլ իրենց անաշխատունակ եւ կարիքաւոր ծնողներուն:

Մննդագին (ալիմենտ) վճարելու վերաբերեալ համաձայնութեան բացակայութեան պարագային՝ օգնութեան կարիք ունեցող ծնողներուն համար անոնց չափահաս աշխատունակ զաւակներէն սննդագինը կը բռնագանձուի դատական կարգով:

Ասոր կարգին, անաշխատունակ կամ նիւթական օգնութեան կարիք ունեցող ծնողին դատարանի վճիռով ապրուստի միջոցներ վճարելէ երեք ամիսէն աւելի չարամտօրէն խուսափիլը կը յանգեցնէ քրեական պատասխանատուութեան:

43. Ի՞նչ իրաւունքներ ունին զաւակները

Ձուակները ունին ընտանիքին հետ ապրելու ու դաստիարակուելու, իրենց ծնողները ճանչնալու, անոնց հոգատարութեան արժանանալու (որքան որ ասիկա հնարաւոր է), անոնց հետ համատեղ ապրելու իրաւունք, բացառութեամբ այն պարագաներուն, երբ ասիկա կրնայ հակասել երեխայի շահերուն:

Երեխան ունի նաեւ իր ծնողներէն դաստիարակութիւն ստանալու, իր շահերուն ապահովութեան, համակողմանի զարգացման, իր մարդկային արժանապատուութիւնը յարգելու, ինչպէս նաեւ ֆիզիքական, մտաւոր, հոգեւոր լիարժէք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրաւունք:

Ծնողներու բացակայութեան, անոնց ծնողական իրաւունքներէն զրկուած ըլլալու եւ ծնողական հոգատարութենէ զրկուելու այլ պարագաներու մէջ ընտանիքին մէջ դաստիարակուելու երեխայի իրաւունքը կ'ապահովէ խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմինը:

Երեխան իրաւունք ունի նաեւ իր ծնողներուն, պապերուն եւ տատերուն, եղբայրներուն, քոյրերուն, ինչպէս նաեւ այլ ազգականներու հետ շփուելու, պաշտպանութեան իրաւունք, սեփական կարծիքը արտայայտելու իրաւունք, անուն, հայրանուն եւ ազգանուն ունենալու իրաւունք, ինչպէս նաեւ զոյքային եւ այլ իրաւունքներ:

44. Որո՞նք կրնան իրականացնել երեխայի իրաւունքներուն եւ օրինական շահերուն պաշտպանութիւնը

Երեխայի իրաւունքներուն եւ օրինական շահերուն պաշտպանութիւնը կ'իրականացնեն ծնողները (օրինական ներկայացուցիչները), իսկ օրէնքով նախատեսուած պարագաներուն՝ խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմինը:

Օրէնքով սահմանուած կարգով լրիւ գործունակ ճանչցուած անչափահասը իր իրաւունքները (ընդ որում՝ պաշտպանութեան իրաւունքը) եւ պարտականութիւնները ինքնուրոյն իրականացնելու իրաւունք ունի:

45. Ի՞նչ երաշխիքներ կը սահմանէ Սահմանադրութիւնը կրթութեան ոլորտին մէջ

Սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ, որ իւրաքանչիւր ոք ունի կրթութեան իրաւունք, եւ որ պետական ուսումնական հաստատութիւններու մէջ միջնակարգ կրթութիւնը անվճար է:

Սահմանադրութիւնը կը սահմանէ նաեւ, որ իւրաքանչիւր ոք օրէնքով սահմանուած պարագաներու եւ կարգով՝ ունի մրցոյթային հիմունքներով պետական բարձրագոյն եւ այլ մասնագիտական կրթական հաստատութիւններու մէջ անվճար կրթութիւն ստանալու իրաւունք:

46. Արդեօք անձը կրնա՞յ ազատ տեղաշարժ ընել Հայաստանի Հանրապետության տարածքին մեջ եւ դուրս գալ երկրէն

Հայաստանի Հանրապետության տարածքին մեջ օրինական հիմքերով գտնուող իւրաքանչիւր ոք ունի ազատ տեղաշարժելու եւ բնակավայր ընտրելու իրաւունք եւ իւրաքանչիւր ոք ունի Հայաստանի Հանրապետութենէն դուրս գալու իրաւունք: Իւրաքանչիւր քաղաքացի եւ Հայաստանի Հանրապետության մեջ օրինական հիմքերով բնակելու իրաւունք ունեցող իւրաքանչիւր ոք ունի Հայաստանի Հանրապետութիւն մուտք գործելու իրաւունք:

47. Ե՞րբ կրնայ սահմանփակուիլ ազատ տեղաշարժի իրաւունքը

Ազատ տեղաշարժի իրաւունքը կրնայ սահմանափակուիլ միայն օրէնքով՝ պետական անվտանգութեան, յանցագործութիւնները կանխելու կամ բացայայտելու, հասարակական կարգի, առողջութեան եւ բարոյականութեան կամ ուրիշներու հիմնական իրաւունքները եւ ազատութիւնները պաշտպանելու նպատակով: ՀՀ քաղաքացիին՝ Հայաստանի Հանրապետութիւն մուտք գործելու իրաւունքը սահմանափակումի ենթակայ չէ:

48. Ի՞նչ կը ներառէ մտքի, խղճի, կրօնի ազատութեան իրաւունքը

Միտքի, խիղճի, կրօնի ազատութեան իրաւունքը կը ներառէ կրօնը կամ համոզմունքները փոխելու ազատութիւնը եւ զանոնք ինչպէս միայնակ, այնպէս ալ ուրիշներու հետ համատեղ եւ հրապարակաւ կամ մասնաւոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողութիւններու, պաշտամունքի այլ ծիսակատարութիւններու կամ այլ ձեւերով արտայայտելու ազատութիւնը:

49. Ի՞նչ կը ներառէ կարծիքը ազատ արտայայտելու իրաւունքը

Կարծիքը ազատ արտայայտելու իրաւունքը կը ներառէ սեփական կարծիք ունենալու, ինչպէս նաեւ առանց պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններու միջամտութեան եւ անկախ պետական սահմաններէն՝ տեղեկատուութեան որեւէ միջոցով տեղեկութիւններ ու գաղափարներ փնտռելու, ստանալու եւ տարածելու ազատութիւնը:

50. Ի՞նչ երաշխիքներ կը նախատեսէ Սահմանադրութիւնը կարծիքը ազատ արտայայտելու իրաւունքի առնչութեամբ

Սահմանադրութեամբ երաշխաւորուած է մամուլի, ռադիոյի, հեռուստատեսութեան եւ տեղեկատուական այլ միջոցներու ազատութիւնը: Պետութիւնը կ'երաշխաւորէ տեղեկատուական, կրթական, մշակութային եւ ժամանցային բնոյթի հաղորդումներու բազմազանութիւն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսութեան եւ ռադիոյի գործունէութիւնը:

51. Կրնայ յարդեօք սահմանափակուիլ կարծիք արտայայտելու ազատութիւնը

Կարծիք արտայայտելու ազատութիւնը կրնայ սահմանափակուիլ միայն օրէնքով՝ պետական անվտանգութեան, հասարակական կարգի, առողջութեան եւ բարոյականութեան կամ ուրիշներու պատիւն ու բարի համբաւը եւ այլ հիմնական իրաւունքներ եւ ազատութիւններ պաշտպանելու նպատակով:

52. Ի՞նչ կը ներառէ հաւաքներու ազատութիւնը

Հաւաքներու ազատութիւնը կ'երաշխաւորէ, որ իւրաքանչիւր ոք կրնայ ազատօրէն մասնակցիլ խաղաղ, առանց զենքի հաւաքներու եւ կազմակերպել զանոնք:

53. Արդեօք պարտադի՞ր է հաւաքի կազմակերպման վերաբերեալ իրազեկումը

Մինչեւ 100 մասնակից ունեցող, շտապ եւ ինքնաբոխի հաւաքներու իրականացման համար իրազեկում չի պահանջուիր, միւս բոլոր պարագաներուն՝ բացօթեայ տարածքներու մէջ կազմակերպուող հաւաքները օրէնքով սահմանուած պայմաններու մէջ կը կատարուին հաւաքի կատարման օրէն ոչ ուշ, քան 7 օր առաջ հաւաքի անցկացման վայրի մասին համայնքի ղեկավարին ներկայացուած իրազեկման հիման վրայ:

54. Ի՞նչ նպատակով կը ներկայացուի հաւաքի վերաբերեալ իրազեկումը

Իրազեկման նպատակը պետութեան կողմէ հաւաքի բնականոն եւ խաղաղ ընթացքը ապահովելու, ինչպէս նաեւ ուրիշներու հիմնական իրաւունքներն ու հանրութեան շահերը պաշտպանելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելն է:

55. Ե՞րբ կրնայ սահմանափակուիլ հաւաքներու ազատութիւնը

Հաւաքներու ազատութիւնը կրնայ սահմանափակուիլ միայն օրէնքով՝ պետական անվտանգութեան, յանցագործութիւնները կանխելու, հասարակական

կարգի պաշտպանութեան, առողջութեան եւ բարոյականութեան կամ ուրիշներու հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները պաշտպանելու նպատակով:

56. Կրնա՞ն արդեօք խումբ մը անձեր միաւորումներ ստեղծել

Իրաքանչիւր ոք ունի ուրիշներու հետ ազատօրէն միաւորուելու, ներառեալ՝ աշխատանքային շահերու պաշտպանութեան նպատակով արհեստակցական միութիւններ ստեղծելու եւ ատոնց անդամագրուելու իրաւունք:

57. Կրնա՞յ արդեօք անձը հարկադրաբար անդամագրուիլ որեւէ մասնաւոր միաւորումի

Սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ, որ կարելի չէ հարկադրել որեւէ մէկը անդամագրուելու որեւէ մասնաւոր միաւորումի:

58. Կրնա՞յ արդեօք միաւորումներու գործունէութիւնը կասեցուիլ կամ արգելուիլ

Միաւորումներու գործունէութիւնը կրնայ կասեցուիլ կամ արգելուիլ բացառապէս օրէնքով սահմանուած պարագաներուն եւ կարգով եւ միայն դատարանի որոշումով:

Միաւորումներու ազատութիւնը կրնայ սահմանափակուիլ միայն օրէնքով՝ պետական անվտանգութեան, հասարակական կարգի, առողջութեան եւ բարոյականութեան կամ ուրիշներու հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները պաշտպանելու նպատակով:

59. Կրնա՞ն արդեօք կուսակցութիւն ստեղծել կամ կուսակցութեան անդամագրուիլ ՀՀ քաղաքացիութիւն չունեցող անձինք

Այլ քաղաքացիներու հետ կուսակցութիւն ստեղծելու եւ որեւէ կուսակցութեան անդամագրուելու իրաւունքը Սահմանադրութեամբ վերապահուած է բացառապէս ՀՀ քաղաքացիութիւն ունեցող անձերու: Օտարերկրացիները եւ քաղաքացիութիւն չունեցող անձեր չեն կրնար ստեղծել կուսակցութիւն եւ անդամագրուիլ կուսակցութիւններու:

60. Ի՞նչ հիմքերով կրնայ արգելուիլ կուսակցութեան գործունէութիւնը

Սահմանադրութիւնը կ'արգելէ այն կուսակցութիւններու գործունէութիւնը, որոնք կը քարոզեն սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնութիւն կը կիրառեն սահմանադրական կարգը տապալելու նպատակով:

61. Ի՞նչ երաշխիք սահմանուած է կուսակցութիւններու գործունէութիւնը կասեցնելու համար

Սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ, որ կուսակցութեան գործունէութիւնը կրնայ կասեցուիլ միայն օրէնքով սահմանուած պարագաներուն՝ Սահմանադրական դատարանի որոշումով:

62. Որո՞նք ունին համապետական ընտրութիւններուն կամ հանրաքուէներու մասնակցելու իրաւունք

Ազգային ժողովի ընտրութիւններուն կամ հանրաքուէներու մասնակցելու իրաւունք ունին Ազգային ժողովի ընտրութեան կամ հանրաքուէի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները:

63. Ո՞վ կրնայ ընտրուիլ ԱԺ պատգամաւոր

Ազգային ժողովի պատգամաւոր կրնայ ընտրուիլ քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարին միայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարին Հայաստանի Հանրապետութեան մէջ մշտապէս բնակող, ընտրական իրաւունք ունեցող եւ հայերէնին տիրապետող իւրաքանչիւր ոք:

64. Որո՞նք ունին տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններուն ատեն ընտրելու եւ ընտրուելու, տեղական հանրաքուէին մասնակցելու իրաւունք

Տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններուն ատեն ընտրելու եւ ընտրուելու, տեղական հանրաքուէին մասնակցելու իրաւունք ունին ընտրութեան, հանրաքուէի կամ քուէարկութեան օրը 18 տարին լրացած անձը՝ ընտրութիւնը անցընող համայնքի բնակչութեան արձանագրութեան մէջ.

1) մինչեւ քուէարկութեան օրը առնուազն 6 ամսուան հաշուառում ունեցող Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները.

2) մինչեւ քուէարկութեան օրը առնուազն վեց ամսուան հաշուառում չունեցող Հայաստանի Հանրապետութեան այն քաղաքացիները, որոնք համայնքին մէջ հաշուառուած են պարտադիր ժամկետային զինուորական ծառայութենէ զօրացրուելու կամ ազատագրկման ձեւով պատիժը կրելէ ազատուելու հանգամանքներով պայմանաւորուած.

3) մինչև քուէարկութեան օրը առնուազն մէկ տարուան հաշուառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն չունեցող անձերը (այսուհետ՝ քաղաքացիութիւն չունեցող ընտրող):

65. Արդեօք ընտրելու եւ ընտրուելու իրաւունք ունի՞ն անգործունակ ճանչցուած անձերն ու դատապարտեալները

Դատարանի՝ օրինական ուժի մէջ մտած վճիռով անգործունակ ճանչցուած, ինչպէս նաեւ դիտաւորութեամբ կատարուած ծանր յանցանքներու համար օրինական ուժի մէջ մտած դատավճիռով դատապարտուած եւ պատիժը կրող անձերը ընտրելու եւ ընտրուելու, ինչպէս նաեւ հանրաքուէին մասնակցելու իրաւունք չունին:

Այլ յանցանքներու համար օրինական ուժի մէջ մտած դատավճիռով դատապարտուած եւ պատիժը կրող անձերը թէեւ չունին ընտրուելու իրաւունք, սակայն իրաւունք ունին ընտրելու եւ մասնակցելու հանրաքուէին:

66. Ե՞րբ անձը չի կրնար արտաքսուիլ կամ յանձնուիլ օտարերկրեայ պետութեան

Ուել անձ չի կրնար արտաքսուիլ կամ յանձնուիլ օտարերկրեայ պետութեան, եթէ իրական սպառնալիք կայ, որ տուեալ անձը կրնայ այդ երկրին մէջ ենթարկուիլ մահապատիժի, խոշտանգումի, անմարդկային կամ նուաստացնող վերաբերմունքի կամ պատիժի:

67. Ի՞նչ նուագագոյն իրաւունքներ կ'երաշխաւորէ Սահմանադրութիւնը ազգային փոքրամասնութիւններուն պատկանող անձերուն համար

Սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ, որ իւրաքանչիւր ոք ունի իր ազգային եւ էթնիկ ինքնութիւնը պահպանելու իրաւունք:

Ազգային փոքրամասնութիւններուն պատկանող անձերը ունին իրենց աւանդոյթները, կրօնը, լեզուն եւ մշակոյթը պահպանելու ու զարգացնելու իրաւունք:

68. Ո՞ր մարմինը կ'իրականացնէ աշխատանքային իրաւունքներու պաշտպանութիւնը

Աշխատանքային իրաւունքներու պաշտպանութիւնը կ'իրականացնեն ընդհանուր իրաւասութեան դատարանները:

69. Ի՞նչ նպատակներով կրնայ գործադուլ իրականացուիլ

Տնտեսական, ընկերային կամ աշխատանքային շահերու պաշտպանութեան նպատակով աշխատողները իրաւունք ունին գործադուլ իրականացնելու:

70. Ե՞րբ կրնայ սահմանափակուիլ սեփականութեան իրաւունքը

Սեփականութեան իրաւունքը կրնայ սահմանափակուիլ միայն օրէնքով՝ հանրութեան շահերու կամ ուրիշներու հիմնական իրաւունքներն ու ազատութիւնները պաշտպանելու նպատակով:

71. Ե՞րբ եւ ի՞նչ կարգով անձը կրնայ զրկուիլ սեփականութենէ

Ոչ ոք կրնայ զրկուիլ սեփականութենէ, բացառութեամբ դատական կարգով՝ օրէնքով սահմանուած պարագաներու:

72. Կրնա՞ն օտարերկրացիները եւ քաղաքացիութիւն չունեցող անձեր Հայաստանի Հանրապետութեան մէջ օգտուիլ հողի սեփականութեան իրաւունքէն

Օտարերկրեայ քաղաքացիները եւ քաղաքացիութիւն չունեցող անձեր չեն օգտուիր հողի սեփականութեան իրաւունքէն, բացառութեամբ օրէնքով սահմանուած դէպքերու: